



Սուրբ Սարգիս զորավարի, նրա որդի Մարտիրոսի և 14 զինակիցների տոնը հանդիսավորությամբ նշվեց Վիրահայոց թեմի Սամցխե-Ջավախքի ու Ծալկայի ընդհանուր առաջնորդական փոխանորդությունում: Ամենուրեք այն արձանագրվեց նախատոնակով, Սուրբ Պատարագներով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի բարձր տնօրինությամբ հաստատված երիտասարդների օրհնության կարգով:

2018 թվականի հունվարի 26-ին՝ երազահաս, խնդրակատար, երիտասարդների բարեխոս Սուրբ Սարգիս զորավարի նախատոնակին, Ախալքալաքի Երիտասարդական կենտրոնի սաները՝



Ախալքալաքի և հարակից գյուղերի հոգևոր հովիվ Արժանապատիվ Տեր Տաթև քահանա Մարուքյանի ուղեկցությամբ, ձիավոր առաջնորդի գլխավորությամբ, շարժվեցին դեպի Ախալքալաքի Սուրբ Խաչ եկեղեցի, որտեղ կատարվեց հանդիսավոր ժամերգություն: Տեր Տաթև քահանան հավուր պատշաճի քարոզ խոսեց, մեկնեց օրվա խորհուրդը, շնորհավորեց եկեղեցում հավաքված հավատացյալներին տոնի կապակցությամբ: Հավարտ ժամերգության՝ կատարվեց երիտասարդների օրհնության կարգ և բաժանվեցին աղի բլիթներ:



Մինչև ուշ գիշեր չդադարեց ուխտավորների հոսքը Ախալքալաքի Սուրբ Խաչ և Դիլիսկայի Սուրբ Սարգիս եկեղեցիներ: Իսկ առավոտյան, Սուրբ Սարգսի տոնի օրը, Ախալքալաքի Սուրբ Խաչ եկեղեցու դպրաց դասը, եկեղեցուն կից գործող կիրակնօրյա դպրոցի սաները, հավատացյալ ուխտավորների խումբը, Տեր Տաթև քահանա Մարուքյանի



ուղեկցությամբ, Սուրբ Սարգսի սրբապատկերով և խաչվառներով, շարականների

երգեցողությամբ շարժվեցին դեպի Դիլիսկայի Սուրբ Սարգիս եկեղեցի, որտեղ նրանց դիմավորեց Դիլիսկայի և հարակից գյուղերի հոգևոր հովիվ Արժանապատիվ Տեր Տիգրան քահանա Մխիթարյանը: Ուխտավորների թափորը միացավ Սուրբ Պատարագին:




Հունվարի 27-ին՝ Սուրբ Սարգիս զորավարի տոնն աննախադեպ էր Դիլիսկայի Սրբի անունը կրող եկեղեցում: Հովվական այցելությամբ այնտեղ էր գտնվում և տոնական Սուրբ Պատարագ մատուցեց Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:



Սրբազան Պատարագին ներկա էին Վրաստանի Խորհրդարանի պատգամավոր Հենգել Մկոյանը, Ախալքալաքի շրջանային ժողովի նախագահ Նաիրի Իրիցյանը, Նինոծմինդայի շրջանային ժողովի նախագահ Սմբատ Կյուրեղյանը, քաղաքապետներ Անիվարդ Մոսոյանը, Յուրիկ Ունանյանը, այլ պաշտոնյաներ, հյուրեր և ուխտավորներ Ջավախքի բոլոր գյուղերից:

Հընթացս Սբ. Պատարագի, Վազգեն Սրբազանը անդրադարձ կատարեց Սուրբ Սարգիս զորավարի և նրա զինակիցների քրիստոնեական հավատի համար նահատակության պատմությանը, խոսեց տոնի խորհրդի մասին, փոխանցեց Ամենայն Հայոց Հայրապետի բարեմաղթանքները երիտասարդներին և, շնորհավորելով նրանց կատարեց երիտասարդների օրհնության կարգ:



Հավարտ Սբ. Պատարագի Վիրահայոց թեմի առաջնորդի ձեռամբ օծվեց Սուրբ Թադևոս Առաքյալի սրբապատկերը և իր օրհնությունն ու գնահատանքը հայտնեց բարերարներին իրենց եկեղեցանվեր գործնեության համար:



Սուրբ Սարգսի տոնը նշվեց նաև Ծալկայի հովվությունում: